Հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի
Պատասխաններ - 9-րդ դասարան

1. Տունը, որտեղ ծնվել է ավստրիացի հանրահայտ ***երգահանը՝*** Ֆրանց Շուբերտը, գտնվում է Վիեննայից ոչ հեռու՝ ***ծաղկաթփերով*** գոտևորված հինավուրց մի բնակավայրում:

Ֆրանցի՝ երգարվեստի հանդեպ բուռն սերը, նաև ***բացառիկ*** ընդունակություններն այնքան ակնհայտ էին, որ վեց տարեկան մանուկը պատրաստ էր օրվա մեծ մասը անցկացնելու երաժշտանոցում:

Տարիներ անց արդեն հասուն Ֆրանցը ազատ ստեղծագործելու համար վարձեց փոքր մի սենյակ և որոշեց առանձնանալ ***ընտանիքից:*** Չափազանց աշխատասեր էր. արթնանալով ***վաղորդայնի*** առաջին շողերի հետ՝ իսկույն սկսում էր ***ստեղծագործել***, մինչև մարմինն ամբողջովին ձգվում էր, մատները՝ ընդարմանում: Քնելիս ակնոցը շատ հաճախ չէր հանում, որ արթնանալուն պես անմիջապես ***թղթին*** հանձներ մտքում ծնվող մեղեդիները: Հպարտ, ինքնամփոփ, նաև ***գաղտնապահ*** էր. ընկերները տեղյակ չէին նրա ո՛չ հիվանդության, ո՛չ էլ՝ անգամ հացի գումար չունենալու մասին: Այդուհանդերձ, Շուբերտն աշխատում էր ***գիշերուզօր՝*** չնայած առողջության օրեցօր վատթարանալուն:

Մի անգամ՝ սենյակ ***մտնելիս***, ընկերները նկատեցին, որ Ֆրանցը նոտագրված մի թուղթ նետեց աղբամանը: Տղաներից մեկը, բոլորից աննկատ վերցնելով թուղթը, որի վրա գրված էր «Ավե Մարիա», դրեց գրպանը:

Հաջորդ կիրակի՝ պատարագի օրը, Շուբերտը գնաց եկեղեցի: Ներսում խորախորհուրդ լռություն էր, և հանկարծ հնչեց հոգեպարար մի մեղեդի: Շուբերտի սիրտը թրթռաց. չէ՞ որ դա Տիրամորն ուղղված մեղեդին էր, որի նոտագրումն ինքը երկու օր առաջ նետել էր աղբամանը:

Գաղտնիքը,իհարկե,շուտով պարզվեց: Տիրամորը փառաբանող ամենաշքեղ երգը, շնորհիվ Շուբերտի ընկերների, դարձավ մարդկության թանկարժեք նվերը:

2.Երգահանը-ենթ., **ծաղկաթփերով**-ներգործող խնդ., **բացառիկ**-որոշիչ, **մտնելիս**-բաց. **ընտանիքից**-անջ.խնդիր, **վաղորդայնի**-հատկ., **ստեղծագործել**-ուղիղ խնդ., **թղթին**-հանգման խնդ., **գաղտնապահ**-ստորոգելի, **գիշերուզօր**-ժամ. պարագա,

3. **ծաղկաթփերով գոտևորված-հարակատար**, **մտքում ծնվող-ենթակայական, Տիրամորը փառաբանող** –ենթ.-որոշիչներ

օրվա մեծ մասը անցկացնելու երաժշտանոցում -անորոշ - հանգման խնդիր

ազատ ստեղծագործելու համար -անորոշ- նպատակ. **առանձնանալ ընտանիքից-անորոշ**- ուղիղ խնդ.

արթնանալով վաղորդայնի առաջին շողերի հետ-անորոշ - ժամանակ **սենյակ մտնելիս**- համակատար-բացահայտիչ

հացի գումար չունենալու մասին- անորոշ - վեր. խնդ. **բոլորից աննկատ վերցնելով թուղթը**- անորոշ-ձևի

չնայած առողջության օրեցօր վատթարանալուն-անորոշ - զիջման պարագա

4. **Հեռու**-տեղի, **հաճախ**-ժամ.,չափ, **արդեն**-ժամ., **չափազանց**-չափի, **գիշերուզօր**-ժամ., **իսկույն**-ժամ., ձև, **ամբողջովին**-չափի, **անմիջապես**- ժամ., ձև, **հանկարծ**-ձև, **օրեցօր**-ժամ.,

5. **<u>ընդ</u>-<u>ուն</u>-<u>ակ</u>, <u>հին</u>-<u>ավուրց</u>, <u>ընտանի</u>-<u>ք</u>, <u>թանկ</u>-<u>արժ</u>-<u>եք</u>, <u>վաղ</u>-<u>որդ</u>-<u>այն</u>, <u>խոր</u>-<u>ա</u>-<u>խորհ</u>-<u>ուրդ</u>, <u>առ</u>-<u>աջ</u>-<u>ին</u>, <u>բաց</u>-<u>առ</u>-<u>իկ</u>, <u>առ</u>-<u>ողջ</u>-<u>ություն</u>, <u>հաս</u>-<u>ուն</u>**

6.**սակավապետ**-ժուժկալ, զուսպ, **նկրտում**-ձգտում, իղձ **առաթուր**-ոտնակոխ, ոտնատակ, **ճամարտակել**-ճոռոմաբանել, շատախոսել, շաղակրատել, **մուճակ**- ոտնաման, տնային կոշիկ, **վեհերոտ**- վախկոտ, ընկճված, թուլամորթ, **ձաղկել**-ծեծել, մտրակել, խարազանել, չարչարել, քննադատել, **պնակալեզ**- շողոքորթ, հացկատակ, **ասպազեն**- զենք ու զրահ, **խանդաղատանք**-գորովանք, գորով, սեր, գութ

7.նպատակամետ, դյուրաբորբոք, աննկուն, քմահաճ, նրբանկատ, խոհուն, հանդուգն, վհատ, մարդախույս, հաշվենկատ:
8.**Կայենի խարան**-եղբայրասպանի՝ դավաճանի կնիք **Հուդայի համբույր**-դավաճանական գործողություն, **Ռուբիկոնն անցնել**- վճռական քայլ կատարել, **կաթիլը քար է ծակում**- համբերելով նպատակիդ կհասնես,**տրոյական ձի**-խարդավանք, խորամանկ որոգայթ
Գնահատման չափանիշներ- 9-րդ դասարան

Գնահատման չափանիշներ 9-րդ դասարան

Ամբողջ հարցաշարին տրվում է 50 միավոր, որից՝
1. Բնագրի ճիշտ կետադրության համար տրվում է 5 միավոր:
Կետադրական կանոնին վերաբերող յուրաքանչյուր ոչ ճիշտ նշանի դեպքում հանվում է 0,5 միավոր:
2. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5, ընդհանուր՝ 5 միավոր:
3.Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5, ընդհանուր՝ 5 միավոր:
Եթե պաշտոնը կամ դերբայը սխալ է նշված, հանվում է 0,25 միավոր:
4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5, ընդհանուր՝ 5 միավոր:
Եթե տեսակը սխալ է նշված, հանվում է 0,25 միավոր:
5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5, ընդհանուր՝ 5 միավոր:
Եթե արմատը կամ ածանցը սխալ է նշված, միավոր չի տրվում:
6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5, ընդհանուր՝ 5 միավոր:
7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5, ընդհանուր՝ 5 միավոր:
8. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 5 միավոր:

Բոլոր առաջադրանքների ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1, կետադրականի համար՝ 0,5, քերականական, ոճական և տողադարձի սխալներից յուրաքանչյուրի համար՝ 0,25 միավոր, շարադրության ծավալը չապահովելու համար՝ 0,5 միավոր: